ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

https://doi.org/10.59982/18294359-25.2-ao-05

Զավեն Գագիկի Սմբատյան
ի.գ.թ.
ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն
zavensmbatyan@mail.ru

Ամփոփագիր

Սույն հոդվածում հանգամանորեն անդրադարձ է կատարվում հակաիրավական գործողություն կամ անգործություն կատարած անձի անմեղսունակության ինստիտուտին՝ որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք, դրա կիրառման պայմաններին ու ոլորտում առկա խնդիրներին:

Հետազոտության իրավական հիմքերն են կազմում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Կատարված հետազոտության արդյունքում բացահայտվել և համակարգային քննարկման են ենթարկվել վարչական պատասխանատվության բացառման և առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության այս երաշխիքի առջև ծառացող հիմնախնդիրները, դրանցից բխող հայեցակարգերը:

Առաջարկվել են ոչ միայն տեսական, այլև գործնական լուծումներ առաջ եկող իրավական խնդիրներին, որոնց վերաբերյալ օրենսդրական կանոնակարգումները երբեմն ոչ ամբողջական են:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն թեմայի բովանդակությունը կազմող ինստիտուտի շուրջ ծավալվող հիմնախնդիրների վերաբերյալ առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական վերլուծության առարկա չի եղել, ինչը փորձ է արվել կատարել սույն աշխատանքում:

Սույն աշխատանքի արժեքն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև նորույթը հետազոտության հիման վրա հակաիրավական գործողություն կամ անգործություն կատարած անձի անմեղսունակության ինստիտուտի շուրջ միասնական դատողությունների և ընկալումների ձևակերպումն է, ինչպես նաև առկա կարգավորումների լավարկումը:

Հիմնաբառեր. Բացառող, անմեղսունակություն, պատասխանատվություն, վարչական իրավախախտում, հիվանդություն, տկարամտություն:

Ներածություն

Վարչական իրավունքը հանրային իրավունքի առավել տարածված ճյուղերից մեկն է, որի շրջանակներում առանցքային դերակատարում ունի վարչական պատասխանատվության ինստիտուտը:

Այս հարթության մեջ ի թիվս այլնի պայմանավորված նաև այն հանգամանքով, որ նշված հոդվածի շրջանակներում քննարկվող ինստիտուտն առնչվում է առավել խոցելի խմբերին, որոնք խրոնիկական հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ այլ հիվանդագին վիճակի հետևանքով չեն կարող իրենց հաշիվ տալ իրենց գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները, ուստի վերջիններիս իրավունքների երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ են տեսական և գործնական հստակ և կանխատեսելի կառուցակարգեր:

Սույն ատենախոսական հետազոտությունը կարելի է վերագրել նշված խնդիրների համակարգված ուսումնասիրությունների արդյունքում իրավունքի զարգացման հայեցակարգին, ինչն էլ պայմանավորում է դրա արդիականությունը:

Սույն հոդվածի հետազոտության օբյեկտը վարչական պատասխանատվության ոլորտում իրավախախտում կատարած անձի անմեղսունակության շուրջ ծառացող իրավահարաբերություններն են:

Սույն հոդվածի հետազոտության առարկա են կազմում սույն հոդվածի հետազոտության օբյեկտի կարգավորմանն ուղղված իրավակարգավորումներից բխող հիմնահարցերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, համադրման, համակարգային մոտեցման մեթոդները: Հետազոտության շրջանակներում կիրառելի են տրամաբանական պատմահիրավական, իրավահամեմատական, մեկնաբանության և այլ մեթոդներ:

Հոդվածի նպատակն իրավական հետազոտության հիման վրա հակահիրավական գործողություն կամ անգործություն կատարած անձի անմեղսունակության ինստիտուտի շուրջ միասնական դատողությունների ամրագրումն է, ինչպես նաև տեսական և գործնական փորձի հիման վրա առավել արդյունավետ և հատկանշական կարգավորումների խարսխումը ՀՀ գործող օրենսդրական դաշտում:

Վարչական պատասխանատվության ինստիտուտում ի թիվս այլնի պայմանավորված նաև այն հանգամանքով, որ թեմայի շրջանակներում քննարկվող ինստիտուտն առնչվում է առավել խոցելի խմբերին, որոնք խրոնիկական հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ այլ հիվանդագին վիճակի հետևանքով չեն կարող իրենց հաշիվ տալ իրենց գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները, ուստի վերջիններիս իրավունքների երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ են տեսական և գործնական հստակ և կանխատեսելի կառուցակարգեր:

Մեր գնահատմամբ և համակարծիք լինելով տեսաբանների կողմից արտահայտված այն մտքի հետ, ըստ որի՝ մեղքի հասկացությունն օրենսդրորեն սահմանելու իրավական անհրաժեշտությունը բացակայում է [Շաքարյան, 123], այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում սահմանել մեղքի և ըստ այդմ անմեղսունակության պատճառով մեղքի բացակայության որոշման չափանիշներ, որպեսզի իրավակիրառողները կարողանան ճիշտ և անշեղորեն կարողանան կիրառել օրենքը տարաբնույթ և հակասական մեկնաբանություններից խուսափելու համար:

Քննարկվող ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը հակաիրավական գործողություն կամ անգործություն կատարելու ժամանակ գտնվել է անմեղսունակ վիճակում, այսինքն՝ խրոնիկական հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող իրեն հաշիվ տալ իր գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները:

Թեև դրանում նկարագրվում է իրավիճակ, որն արտացոլում է միայն մեղսունակության հատկանիշները, և գործող ՀՀ օրենսդրությունը չի ճանաչում «սահմանափակ մեղսունակության» ինստիտուտը, սակայն կան տեսաբաններ որոնք կարծում են, որ սահմանափակ մեղսունակության ինստիտուտի կիրառման պարագայում առավել նպատակահարմար կլինի այն նույնպես համարել վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք [Դանիելյան, 92]:

Վարչական պատասխանատվությունը բացառող այս ինստիտուտը փաստացի փոխկապակցված է զանցակազմի միանգամից երկու տարրերի հետ, դրանք են՝ սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը:

Սուբյեկտի հետ այս ինստիտուտը փոխկապակցված է այնքանով, որ անմեղսունակությունը սուբյեկտիվ իրավիճակ է, երբ կոնկրետ անձի մոտ առկա է անմեղսունակության դրսևորում, իսկ սուբյեկտիվ կողմի հետ փոխկապակցված է այնքանով որքանով անձը որոշակի վիճակի հետևանքով չէր կարող իրեն հաշիվ տալ իր գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները, որպիսի պայմաններում մեղքի դրսևորման մասը մնում է վիճելի կամ բացառվում է:

Վարչական պատասխանատվության հարցի քննարկման տեսանկյունից անձը համարվում է անմեղսունակ, երբ հակաիրավական գործողություն կատարելու ժամանակ տառապել է խրոնիկական հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող իրեն հաշիվ տալ իր գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները:

Վարչական իրավունքում, վարչական մարմինների կողմից պրակտիկայում և դատարանի կողմից դատական գործընթացներում այս ինստիտուտը բավականաչափ քննարկման առարկա չի դարձել և բացակայում է դրա վերաբերյալ դոկտրինալ և գործառնական փորձը, սակայն այս ինստիտուտը բավականաչափ ուսումնասիրված է քրեական իրավունքի տեսանկյունից:

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադառնալով անձի անմեղսունակության հարցին՝ արձանագրել է, որ «(...) անձի մեղսունակությունն օրենսդիրը կապում է նրա կողմից իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը, դրա վտանգավորությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու ունակության հետ: (…)» [ՀՀ վճռաբեկ դատարանի]:

Անմեղսունակությունը համարվում է վարչական իրավախախտման համար վարույթը բացառող, սակայն ապացույցներ պահանջող հանգամանք:

Անմեղսունակության փաստի հաստատումը առողջապահության ոլորտի և մասնագետների նեղ շրջանակի պարտականությունն է [Лункашу, 103]:

Անմեղսունակությունը հաստատվում է վարչական իրավախախտում կատարելու պահին: Դրան պարտադիր մասնակցում են նեղ մասնագետներ՝ փորձագետներ-հոգեբույժներ [Фархутдинов, 255]:

Այսպիսով, ՀՀ գործող օրենսդրությունն անդրադառնալով վարչական իրավախախտման բնագավառում անմեղսունակության վիճակի իրավական բովանդակությանը, նշել է մի քանի առանցքային տարրեր, որոնց միաժամանակյա առկայության պայմաններում քննարկվող իրավանորմը կարող է կենսագործվել և անձը այս հիմնավորմամբ կկարողանա ազատվել վարչական պատասխանատվության անբարենպաստ հետևանքից [Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք]:

Մասնավորապես այդ տարրերն են՝

1. Անձը անմեղունակ պետք է լինի ոչ թե իրավախախտում կատարելուց առաջ կամ հետո, այլ հենց իրավախախտում կատարելու պահին:
2. Անձի մոտ պետք է առկա լինի խրոնիկական հոգեկան հիվանդություն, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, տկարամտություն կամ այլ հիվանդագին վիճակ:
3. Անձի մոտ պետք է առկա լինի իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները ղեկավարելու անկարողություն:
4. Հիվանդության և անկարողության միջև պետք է առկա լինի պատճառահետևանքային կապ, այսինքն՝ կոնկրետ հիվանդության հետևանքով անձը չպետք է կարողանա գիտակցել կամ ղեկավարել իր գործողությունները և դրանց հնարավոր բացասական հետևանքները:

Թվարկված տարրերի միաժամանակյա առկայության պայմաններում միայն կարելի է խոսել անմեղսունակության մասին, որի բացակայությունը հանգեցնում է առերևույթ վարչական պատասխանատվության միջոցի անարգել կիրառմանը:

Նշված տարրերի հաստատումը կամ հերքումը չի կարող լինել կամայական և պետք է հիմնված լինի համապատասխան փաստի և ապացույցի վրա:

Կարևոր է ոչ միայն տեսական հարթությունում այլ նաև օրենսդրական հարթությունում ընգծել և կարևորել, որ անմեղսունակության ինստիտուտի առնչությամբ վարչական մարմինը չպետք է օժտված լինի հայեցողական լիազորությամբ, ինչը ևս լրացուցիչ երաշխիք է այն բանի, որ անձի համար (օրինական ներկայացուցիչ) կանխատեսելի կլինեն իր նկատմամբ կիրառվող գործիքակազմերի ուղղվածությունը և դրանց արդյունքները:

Ո՛չ վարչական իրավունքի տեսությունը, ո՛չ էլ պրակտիկան չեն մշակել միասնական մոտեցում վարչական իրավախախտումների վարույթի գործընթացում անմեղսունակության հաստատման հարցի լուծման վերաբերյալ:

Մեր գնահատմամբ անմեղսունակությունը մի փաստական իրավիճակ է, որ կարող է հաստատվել կամ հերքվել միայն կոնկրետ ապացույցով, այն է՝ խրոնիկական

հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ այլ հիվանդագին վիճակի ստուգման նպատակով իրականացված փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունը, սակայն հիշյալ փորձաքննությունն այնպիսի իրավական գործընթաց է, որը կարող է տևել երկու կամ ավելի ամիս, որն անհամատեղելի է վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի հետ, քանի որ, եթե լրանա վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության երկամսյա ժամկետը, ապա անձը կազատվի պատասխանատվությունից, եթե նույնիսկ փորձաքննության արդյունքում պարզվի, որ վերջինս իրավախախտում կատարելու ժամանակ եղել է մեղսունակ:

Նման իրավիճակում այս ոլորտում առկա կանոնակարգումների հստակեցումը կլուծի իրավորմի կիրառելության վերաբերյալ հիմանական խնդիրը, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող կառուցակարգերում հստակ օրենսդրական չափորոշիչների և կիրառման ընթացակարգերի բացակայությունը հանգեցնում է նորմը չկիրառելուն, հենց այս է պատճառը, որ թե՛ վարչական և թե՛ դատական պրակտիկայում առկա չէ իրավակիրառ պրակտիկա այս հարթության մեջ:

Գործնականում կարող են պատահել դեպքեր, երբ անձի կողմից գործը քննող իրավասու պաշտոնատար անձին ներկայացվում է տեղեկանք վարչական պատասխանատվության վարույթի սուբյեկտի որևէ հոգեկան առողջության կենտրոնում հաշվառված լինելու կամ որևէ հիվանդությամբ տառապելու վերաբերյալ, սակայն դա չի կարող հաստատել այն փաստը, որ հենց իրավախախտման գործողությունը կատարելու պահի դրությամբ այդ հիվանդությունն առկա է եղել (հնարավոր է հաշվառված է վաղուց և բուժվել է), կամ որ չի կարողացել իրեն հաշիվ տալ իր գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները հենց հիվանդության հետևանքով:

Նման պայմաններում, անկախ այն հանգամանքից, որ օրենսդրությունը ուղիղ նախատեսում է, որ այս իրավիճակում վարչական պատասխանատվության վարույթ չի կարող հարուցվել, այնուամենայնիվ, վարչական պատասխանատվության վարույթը ենթակա է հարուցման, քանի որ վարչական մարմինը անմեղունակության վերաբերյալ ապացույցները պետք է ձեռք բերի և գնահատի վարույթի ընթացքում, իսկ այն դեպքում, երբ վարույթի ընթացքում պարզվում է, որ իրավախախտումը կատարելու ժամանակ իրավախախտը գտնվել է անմեղսունակ վիճակում, ապա վարչական պատասխանատվության վարույթը ենթակա է կարճման:

Ամփոփելով ամբողջ վերը նշվածը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում ի տարբերություն քրեական պատասխանատվության ոլորտում առկա ընթացակարգերի՝ վարչական պատասխանատվության ընթացակարգերում գրեթե չի կիրառվում այս ինստիտուտը, ինչի պատճառն առկա օրենսդրական անորոշություն է և կիրառման մեխանիզմների բացակայությունը, որի հետևանքով իրավակիրառ սուբյեկտները կամ չեն կարողանում կիրառել կառուցակարգերը, կամ խուսափում են դրանք կիրառելուց հնարավոր իրավական հետևանքից խուսափելու համար:

Եզրակացություն

Ամփոփելով հոդվածի արդյունքները՝ նպատակահարմար է արձանագրել հետևյալ եզրահանգումները.

1. Անձի անմեղսունակությունը՝ որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք, փաստացի փոխկապակցված է զանցակազմի միանգամից երկու տարրերի հետ, դրանք են՝ սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Սուբյեկտի հետ այս ինստիտուտը փոխկապակցված է նրանով, որ անմեղսունակությունը սուբյեկտիվ իրավիճակ է, երբ կոնկրետ անձի մոտ առկա է անմեղսունակության դրսևորում, իսկ սուբյեկտիվ կողմի հետ փոխկապակցված է այնքանով, որքանով անձը որոշակի վիճակի հետևանքով չէր կարող իրեն հաշիվ տալ իր գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները, որպիսի պայմաններում մեղքի դրսևորման մասը մնում է վիճելի կամ բացառվում է:

2. Վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքի՝ անմեղսունակության տարրերն են՝ 1. անձն անմեղունակ պետք է լինի ոչ թե իրավախախտում կատարելուց առաջ կամ հետո, այլ հենց իրավախախտում կատարելու պահին, 2. անձի մոտ պետք է առկա լինի խրոնիկական հոգեկան հիվանդություն, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, տկարամտություն կամ այլ հիվանդագին վիճակ, 3. անձի մոտ պետք է առկա լինի իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները ղեկավարելու անկարողություն, 4. հիվանդության և անկարողության միջև պետք է առկա լինի պատճառահետևանքային կապ, այսինքն՝ կոնկրետ հիվանդության հետևանքով անձը չպետք է կարողանա գիտակցել կամ ղեկավարել իր գործողությունները և դրանց հնարավոր բացասական հետևանքները:

Թվարկված տարրերի միաժամանակյա առկայության պայմաններում միայն կարելի է կիրառել անմեղսունակության հիմքով գործի վարույթը կարճելու գործիքակազմը, իսկ տարրերից նույնիսկ մեկի բացակայությունը հանգեցնում է առերևույթ վարչական պատասխանատվության միջոցի անարգել կիրառմանը:

3. Կարևոր է ոչ միայն տեսական հարթությունում, այլ նաև օրենսդրական հարթությունում ընգծել և կարևորել, որ անմեղսունակության ինստիտուտի առնչությամբ վարչական մարմինը չպետք է օժտված լինի հայեցողական լիազորությամբ, ինչը ևս լրացուցիչ երաշխիք է այն բանի, որ անձի (օրինական ներկայացուցիչ) համար կանխատեսելի կլինեն իր նկատմամբ կիրառվող գործիքակազմերի ուղղվածությունը և դրանց արդյունքները:

4. Անմեղսունակությունը մի փաստական իրավիճակ է, որ կարող է հաստատվել կամ հերքվել միայն կոնկրետ ապացույցով, այն է՝ խրոնիկական հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ այլ հիվանդագին վիճակի ստուգման նպատակով իրականացված փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունը, ուստի փորձաքննության նշանակման արդյունքում վարչական վարույթը պետք է երկարաձգվի, իսկ վաղեմության ժամկետների հոսքը համարվի սառեցված:

5. Անկախ այն հանգամանքից, որ օրենսդրությունն ուղիղ նախատեսում է, որ այս իրավիճակում վարչական պատասխանատվության վարույթ չի կարող հարուցվել, այնուամենայնիվ վարչական պատասխանատվության վարույթը ենթակա է հարուցման, քանի որ վարչական մարմինը անմեղունակության վերաբերյալ ապացույցները պետք է ձեռք բերի և գնահատի վարույթի ընթացքում, իսկ այն դեպքում, երբ վարույթի ընթացքում պարզվում է, որ իրավախախտումը կատարելու ժամանակ իրավախախտը գտնվել է անմեղսունակ վիճակում, ապա վարչական պատասխանատվության վարույթ ենթակա է կարճման:

Գրականության ցանկ

1. Դանիելյան Գևորգ, Վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում Երևան 2007թ., 248 էջ:
2. Շաքարյան Թամարա, Իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ Երևան 2013թ. 239 էջ:
3. Лункашу Ю.В., Светлова А.П. Презумпция вменяемости в административном праве // Общество и право. 2021. №3 (77). С. 102-107.
4. Фархутдинов Р.Д. ««Невменяемость» и «крайняя необходимость» как основания исключения ответственности в административном праве» Международный научный журнал «ВЕСТНИК НАУКИ» № 5 (62) Т.3 2023г. с. 252-260.
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք՝ ընդունված 06.12.1985 թվականին: https://www.arlis.am/hy/acts/20/latest, 25.08.2025:
6. ՀՀ վճռաբեկ դատարանի 04.05.2010 թվականին թիվ ԵՔՐԴ/0350/01/08 վարչական քրեական կայացված նախադեպային որոշում: https://www.arlis.am/hy/acts/60583 , 25.08.2025:

INSANITY AS A CIRCUMSTANCE EXCLUDING ADMINISTRATIVE LIABILITY

Zaven Smbatyan
Ph.D. in Law
EUA, Chair of Law
zavensmbatyan@mail.ru

Abstract

This article examines in detail the institution of insanity of a person who committed an unlawful act or omission as a circumstance excluding administrative liability, the conditions for its application, and the problems existing in the field.

The legal basis for the research is the Code of Administrative Offenses, the law "On Fundamentals of Administration and Administrative Proceedings", and precedent decisions of the RA Court of Cassation.

The results of the conducted research revealed and further discussed the key issues facing this guarantee of protection of the rights of vulnerable groups, as well as the concepts arising from them.

Not only theoretical but also practical solutions have been proposed to emerging legal issues, regarding which legislative regulations are sometimes incomplete.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

The article discusses issues that have been reflected to one degree or another in the works of various authors, but the issues surrounding the institution that constitutes the content of the topic have not been the subject of a separate complex scientific discussion and legal analysis, which is what has been attempted in this work.

The value and practical significance of this work, as well as its novelty, is the formulation of unified judgments and perceptions on the institution of insanity of a person who has committed an unlawful act or omission, based on research, as well as the improvement of existing regulations.

Keywords: Exclusionary, insanity, responsibility, administrative offense, disease, dementia.

Ներկայացվել է՝ 27.08.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 27.11.2025թ.